**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

---

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 07/2025/Վ/Վ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 13 օգոստոսի, 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ 2025 թվականի մայիսի 15-ին վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված թիվ 07/2025-/Վ/Վ վարույթի նյութերը.

## ՊԱՐԶԵՑ

### I. Նախապատմություն

1.1. Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «factor.am» լրատվական կայքի՝ 2025 թվականի մայիսի 8-ի

հրապարակումը[1] (այսուհետ՝ Հրապարակում 1), «iravaban.net» լրատվական կայքի՝ 2025 թվականի մայիսի 7-ի հրապարակումը[2] (այսուհետ՝ Հրապարակում 2), «24news.am» լրատվական կայքի՝ 2025 թվականի մայիսի 7-ի հրապարակումը[3] (այսուհետ՝ Հրապարակում 3) և նույն լրատվական կայքի՝ 2025 թվականի մայիսի 7-ի հրապարակումը[4] (այսուհետ՝ Հրապարակում 4), 2025 թվականի մայիսի 15-ին կայացրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ 07/2025/Վ/Վ որոշումը (այսուհետ նաև՝ Հարուցման որոշում):

1.2. Հրապարակումներով ներկայացված տեղեկատվության համաձայն՝

1.2.1. Ազգային ժողովի ութերորդ գումարման իններորդ նստաշրջանի 2025 թվականի մայիսի 7-ի հերթական նիստին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, պատասխանելով Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աննա Գրիգորյանի հարցին, նշել է.

«(...) *Մամուլի հրապարակումներով առաջնորդվեմ, սաղիդ պիտի տանեմ լցնեմ ԱԱԾ-ի պադվալը (դահլիճից լսվում են արձագանքներ, որոնցից հստակ լսելի է հետևյալը. «Առաջինը դու պտի գնաս», այնուհետև լսվում է ԱԺ նախագահի ձայնը՝ հլը ձեններդ, կամաց): Առաջինը դու պտի գնաս ու դու կգնաս, հերիք ա մամուլի բան անես, մամուլը ձեր մասին ինչ ա գրում, ինչ ա գրում ձեր մասին մամուլը, (լսվում է ԱԺ նախագահի ձայնը՝ լռություն) գրում ա, որ օտարերկրյա գործակալ եք, հինգերորդ անիվ եք, ազդեցության գործակալ եք, մամուլը (ամբողջ ընթացքում դահլիճից լսվում են արձագանքներ, որոնք հստակ լսելի չեն, այնուհետև լսվում է ԱԺ նախագահի արձագանքը՝ մամուլի գրածներին խի՞ եք տենց արձագանքում): Ուրեմն նստեք տեղներդ, ձեններդ կտրեք, ներվերս էլ չուտեք (լսվում է արձագանք՝ դու ձենդ կտրի, լսվում են այլ արձագանքներ, որոնք հստակ լսելի չեն): Ասեցի, վեր ընկի տեղդ, ասեցի, ներվերս չուտես (Նիկոլ Փաշինյանը հեռանում է ամբիոնի մոտից, այնուհետև լսելի են բազմաթիվ ձայներ, որոնք հստակ հասկանալի չեն):»:*

---

[1] Հասանելի՝ https://factor.am/888893.html

[2] Հասանելի՝ https://iravaban.net/518632.html

[3] Հասանելի՝ https://24news.am/nerkin-kyank/401234/

[4] Հասանելի՝ https://24news.am/nerkin-kyank/401208/

1.2.2. Հրապարակումների համաձայն՝ նշված միջադեպից հետո՝ ընդմիջման ընթացքում, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ազգային ժողովի պատգամավորների միջև շարունակվում է վիճաբանությունը, որը հիմնականում հստակ լսելի չէ: Հրապարակում 1-ով ներկայացված տեսանյութերի համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մի քանի անգամ կանգնում է իր տեղից, դիմում է ընդդիմադիր պատգամավորներին, մեկ անգամ՝ քայլելով դեպի նիստերի դահլիճում «Հայաստան» խմբակցության պատգամավորների նստատեղեր: Լսվում են ՀՀ վարչապետի կողմից հնչեցված հետևյալ արտահայտությունները՝ «(...) Վեր ընկի տեղդ, արա, համբալի մեկը, համբալի մեկը (նստում է, ամբողջ ընթացքում լսվում են արձագանքներ, որոնք հասկանալի չեն):»: Հրապարակում 4-ում տեղադրված տեսանյութում լսվում են նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցվող «դե թող տանեն հրապարակեն, հույս ունեմ՝ նկարել ա» բառերը:

1.3. 2025 թվականի մայիսի 21-ին թիվ 01/2108-2025 գրությամբ Հարուցման որոշումը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ միաժամանակ պահանջելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Նիկոլ Փաշինյանը գրության ստացումը էլեկտրոնային փոստի միջոցով հաստատել է 2025 թվականի մայիսի 27-ին:

1.4. 2025 թվականի հունիսի 9-ին Հանձնաժողովում մուտքագրվել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի դիրքորոշումը:

1.5. Հանձնաժողովը 2025 թվականի հունիսի 25-ն ուղարկված թիվ 01/2526-2025 գրությամբ Ազգային ժողովից պահանջել է ներկայացնել վարույթի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն, որը ներկայացվել է 2025 թվականի հուլիսի 3-ին Հանձնաժողովում մուտքագրված՝ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի թիվ 1/3073-2025 գրությամբ:

## II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2025 թվականի հունիսի 9-ին Հանձնաժողովում մուտքագրված գրությամբ վարույթում քննարկվող՝ վարքագծի կանոնների առերևույթ խախտումների

առնչությամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրել է դիրքորոշում (այսուհետ՝ Դիրքորոշում) առ այն, որ.

Ափսոսում է Ազգային ժողովում տեղի ունեցածի համար: Ըստ Դիրքորոշման՝ պիտի առավելագույնն անենք նման դեպքերի կրկնություն թույլ չտալու համար, բայց Հայաստանում այս պահին առկա քաղաքական մշակույթը թույլ չի տալիս բացառել նման դեպքերը:

Դիրքորոշման համաձայն՝ քաղաքական մշակույթի փոփոխությունը խնդիր է, որ պիտի փորձենք լուծել համատեղ ջանքերով: Միաժամանակ, Նիկոլ Փաշինյանը հայտնել է, որ Ազգային ժողովում տեղի ունեցածի ժամանակ իր կողմից հնչեցված արտահայտությունները եղել են բացառապես քաղաքական բանավեճի շրջանակներում, որի պարագայում որևէ մեկին անձնական վիրավորանք կամ սպառնալիք հասցնելու միտում չի ունեցել:

## III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

3.1 Հանրապետության նախագահի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ ՆՀ-200-Ա հրամանագրով Նիկոլ Փաշինյանը նշանակվել է ՀՀ վարչապետ և պաշտոնավարում է մինչ օրս:

3.2 Հրապարակում 2-ով ներկայացված տեսանյութի և Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի՝ 2025 թվականի հուլիսի 3-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ 1/3073-2025 գրությամբ ներկայացված՝ 2025 թվականի մայիսի 7-ի վերջին հիմնական նիստի սղագրության և տեսաձայնագրության ուսումնասիրմամբ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

3.2.1 Նիստի ընթացքում Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավորների կողմից հնչեցված հարցերը, ի թիվս այլնի, վերաբերել են 2025 թվականի ապրիլի 30-ին Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքում տեղի ունեցած ծեծին, որին մասնակցել է նաև վարչական շրջանի ղեկավարը, նշված դեպքին առնչվող՝ ենթադրյալ կոռուպցիոն բնույթի դեպքի վերաբերյալ հասարակական գործիչ Արթուր Չախոյանի հրապարակած տեղեկություններին, ասֆալտապատման աշխատանքներին և դրանց արդյունավետությանը, այդ գործընթացում հնարավոր չարաշահումներին,

զանգվածային լրատվության միջոցների կողմից ենթադրյալ կոռուպցիոն բնույթի դեպքերի վերաբերյալ հրապարակումներին, դրանց՝ Կառավարության և իրավապահ մարմինների արձագանքին:

3.2.2 Ազգային ժողովի պատգամավոր Քրիստինե Վարդանյանը հնչեցրել է հետևյալ հարցը (տեսաձայնագրության 01:15:57 րոպե). *«Ապրիլի 30-ին Նոր Նորքի համայնքապետը, ուղիղ եթերում լրատվամիջոցների առկայությամբ, բառի բուն իմաստով, տասնյակից ավելի մարդով հարձակվելով, ծեծի է ենթարկել բլոգեր Արթուր Չախոյանին: Եվ ինչի՞ց հետո է այս դեպքը տեղի ունեցել. երբ բլոգերը և ընդդիմադիր ավագանու անդամը բացահայտել են, ըստ էության, կոռուպցիոն սխեմա, որով «Լիլանարմ» ՍՊԸ-ն, որի տնօրենը Նարեկ Պողոսյանն է, որը «Քաղաքացիական պայմանագրի» ցանկով ավագանու անդամ է, ստանում է քաղաքապետարանից մեկ անձի գնումներով միլիոնավոր դրամների բազմաթիվ պայմանագրեր, ու էդ պայմանագրերից մեկով 300 միլիոն դրամի նախագծային արժեքով մանկապարտեզ պիտի կառուցեր Նոր Նորքում, որը պիտի շահագործման հանձնված լիներ 2024-ի սեպտեմբերին, բայց մարդիկ գնացել են, բացահայտել են 2025-ի ապրիլին, որ էդ մանկապարտեզը շատ հեռու ա շահագործման հանձնելու վիճակի լինելուց: Ու ի՞նչ ա սրան հաջորդել. հաջորդել ա հայհոյանքը թաղապետի, հաջորդել ա ակցիան և ծեծը, որը բոլորս տեսել ենք: Հիմա ես ուզում եմ իմանալ, քանի որ ձեր կոալիցիոն գործընկերն արդեն իսկ այդ դրվագն անվանել ա «ինքնիշխանության համար մարտեր», ասում ա՝ ծեծել են ինքնիշխանությունը պահելու համար Հայաստանի Հանրապետության: Ես հիմա ուզում եմ էս երկու դրվագով կոռուպցիայի դեմ պայքարող Նիկոլ Փաշինյանի և բռնությանը դեմ եղող Նիկոլ Փաշինյանի կարծիքը իմանալ: Ձեզ համար, կարծես թե, նորմալ է, որ էս վիճակն է, ձեր թիմին պատկանող մարդուն է հանձնվում մեկ անձից գնումներով միլիոնավոր դրամների պայմանագրեր, տասնյակ ու հարյուրավոր միլիոնավոր դրամների, և երկրորդը՝ Դո՞ւք էլ եք կարծում, որ ընդունելի է ծեծել, այսինքն՝ ծեծել են Հայաստանի ինքնիշխանության համար բլոգերին, ով բացահայտել է կոռուպցիոն սխեման:»:*

3.2.3 Նշված հարցին պատասխանելով՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է հետևյալը (տեսաձայնագրության 01:18:06 րոպե). *«(...) Առաջինը. ես կարծում*

*եմ, որ մենք որևէ ամբիոնից որևէ մեկի անմեղության կանխավարկածը խախտելու իրավունք չունենք: Ես նկատի ունեմ, քանի որ Դուք նշեցիք դրվագ, որը ես էդքան էլ չգիտեմ մանրամասն՝ վկայակոչելով կոռուպցիոն սխեմա և այլն, և այլն: (...)»:*

3.2.4 Նշված պատասխանին արձագանքելով՝ Ազգային ժողովի պատգամավոր Քրիստինե Վարդանյանը նշել է հետևյալը (տեսաձայնագրության 01:20:50 րոպե). *«Կոռուպցիան հո չտեսնված, չլսված, պոզով-պոչով կենդանի չի՞: Էն դեպքն աղմկահարույց, որը քննարկեց ամբողջ Հայաստանը, տեղի էր ունեցել էն բացահայտման հիման վրա, որը ես Ձեզ ասեցի: Ես պատկերացնում եմ, որ եթե ընդդիմադիր հայացքներ ունեցող որևէ մեկի մասին որևէ լուր հայտնվեր մամուլում, ձեր քննչականը, դատախազությունը ինչ արագությամբ կզբաղվեր դրանով: Որքա՞ն ժամանակ ա էս, որևէ գործ հարուցվե՞լ ա, այսինքն՝ կոռուպցիան, մսխումն էլ ո՞նց ա լինում: (...)»:*

3.2.5 ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նշված հարցին արձագանքելով, նշել է (տեսաձայնագրության 01:22:14 րոպե). *«Լսեք, որպեսզի հստակ լինի, ցանկացած մեկը, ով պետական բյուջեից կոռուպցիոն սխեմա ա ձեռնարկում և փող ա տանում, իմ անձնական թշնամին ա, ցանկացած մեկը, ով ուզում ա լինի: Որպեսզի պարզ լինի: Էդ մնացածը, լսեք, հերիք ա ինձ քննիչի, դատախազի, օպերի, լիազորի... Մի կողմից՝ առավոտից իրիկուն ասում եք՝ սուպերվարչապետական համակարգ ա, հեռախոսը վերցրեց, էս արեց, էն արեց... Ես ասում եմ՝ Ձեր ասած դեպքի մասին լսում եմ առաջին անգամ, որովհետև, պատկերացրեք, ես ավելի կարևոր գործեր ունեմ: Երկրում ստեղծված են ինստիտուցիոնալ համակարգեր, ինստիտուցիոնալ համակարգեր: Գալիս են իրավապահ համակարգը, մենք օրենսդրական փոփոխություններ ենք արել, և այդ թվում՝ Քննչական կոմիտեն և Հակակոռուպցիոն կոմիտեն գալիս ա Ազգային ժողով, հաշվետվություն են տալիս: Եթե որևէ մեկը կասի, որ վարչապետը ինձ ասել է, որ կոռուպցիայի դեմ չպայքարես և, ընդհակառակը, որևէ մեկը կասի, որ ես չեմ ասել բոլորին, որ ով կոռուպցիայով ա զբաղվում, իմ անձնական թշնամին ա... Դուք հիմա եկել եք, ինձ մեկ էլ ասում եք՝ բանում, բա գիտե՞ս, բանում, բանում, սադում Մասիվի, էն օրը անցնում էինք, չորս հոգի նստած էին, մեկը՝ պպզած: Բա սենց ո՞նց կլինի, այ քեզ բան: Դա ձեր զբաղվելու գործն ա, պատգամավոր եք, զբաղվեք: Ինստիտուտներ կան երկրում, ես*

*ուզում եմ մի հատ ձեր դիրքորոշումը... Դուք ուզում եք երկիրը ինստիտուցիոնալ ի վերջո ընկի, թե չլինի:»:*

3.2.6 Ազգային ժողովի պատգամավոր Գեղամ Մանուկյանը հնչեցրել է հետևյալ հարցը (տեսաձայնագրության 02:04:22 րոպե). *«(...) Կառավարության գործունեության քննարկման ժամանակ Նիկոլ Փաշինյանի թիկնազորի միջոցով փոխանցեցի նրան հսկայական թղթածրար՝ լրագրողական հետաքննությունների ժողովածու, որտեղ խոսվում էր այսօրվա Կառավարության, այսօրվա իշխանության, տարբեր անհատների, տարբեր գործիչների՝ նախարար, պատգամավոր, գործունեության հետ կապված, անմեղության կանխավարկածը հարգելով, ինչ-որ հետաքննություն էր, փաստական հետաքննություն էր: Չգիտեմ՝ կարդացե՞լ ա Նիկոլ Փաշինյանը, թե՞՝ չէ: Օրինակ, դա կարդալուց հետո, օրինակ՝ կարող էր Հակոբ Սիմիդյանին ասել, անմեղության կանխավարկածը հարգելով, օրինակ՝ էդ ստադիոնի շինարարությունը Աբովյանի ո՞նց ա եղել, որ քո ընկերոջ հարևանի ֆիրման ա, որ առաջին անգամ էդ մեծ ծավալով ա (...):*

3.2.7 Պատասխանելով Ազգային ժողովի պատգամավոր Գեղամ Մանուկյանի հարցին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է (տեսաձայնագրության 02:08:23 րոպե). *«(...) Եվ կոռուպցիայի մասին դուք բոլորդ գիտեք, որովհետև... և հանրությունը գիտի և էդ ամեն ինչը գիտի, որովհետև Հայաստանի Հանրապետությունը մամուլի ազատությամբ աշխարհում 34-րդ երկիրն ա: Հիմա ոչ մեկը մամուլի հրապարակումների համար... ոչ մեկը, բան, խմբագրություններ չեն պայթացնում, լրագրողների չեն նստացնում, լրագրողների չեն սպանում: Եվ, և էդ ամեն ինչը դրա արդյունքն է:»:*

3.2.8 Գեղամ Մանուկյանը, արձագանքելով Նիկոլ Փաշինյանի պատասխանին, նշել է (տեսաձայնագրության 02:09:39 րոպե). *«(...) Լսեք, 100 հոդված տպվեց ԱՆԻՖ-ի հետ կապված, Աննա Գրիգորյանի գործին եմ խփում, ԱՆԻՖ-ի հետ կապված, ստեղ ասում եք՝ անմեղության կանխավարկած: Հա, անմեղության կանխավարկածը հասկացանք, բայց էդքան նյութ որ հրապարակվել ա, դրանից հետո էսպես (...):»:*

3.2.9 Ի պատասխան Գ.Մանուկյանի արձագանքի՝ Նիկոլ Փաշինյանը նշել է (տեսաձայնագրության 02:10:30 րոպե). *«(...) Ինչ վերաբերում ա ԱՆԻՖ-ի հետ*

*կապված հարցին, տիկին Գրիգորյանի գործին չեք խփում, իմ գործին եք խփում, որովհետև էն, ինչ որ դուք գիտեք ԱՆԻՖ-ի մասին, ուրեմն, էդ ամեն ինչը գիտեք միայն այն բանի շնորհիվ, որ իմ հանձնարարությամբ տարբեր մարմինները ուսումնասիրել են և արել են բացահայտումներ: Եվ Ձեզ ավելին ասեմ, էսօր հրապարակում ա եղել, որ խոշորագույն ավիաընկերություններից մեկը Հայաստանում բազավորվում ա և նոր 8, թե 9 ուղղություններով չվերթ ա բացում: Ի՞նչ կապ ունի սա պատմության հետ նախորդ շրջանի: Ուղիղ ոչ մի կապ չունի: Սա կապ ունի նրա հետ, որ մենք այդպես չարչարվելով, տանջվելով, սխալվելով ամեն ինչ արել ենք և անում ենք Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար էժան և մատչելի գներով ճամփորդելու համար: Այո, էդ ճանապարհին սխալվել ենք, էդ ճանապարհին սխալվելու ենք, բայց կանգ չենք առնում, որովհետև ուզում ենք աշխարհը բացել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների առաջ և Հայաստանի Հանրապետությունը բացել աշխարհի քաղաքացիների առաջ: Այո, Դուք հիմա կարող եք ասել, որ բա, էսքան, էնքան... Էլի եմ ասում, էդ ոչ մի բան անպատասխան չի մնա, բայց էսօր, երբ որ Wizz Air ավիաընկերությունը տարածում ա, որ մեր գները, բազային գները սկսելու են 29 եվրոյից, և 8 ուղղություններով, 9 ուղղություններով 29 եվրոյով Հայաստանի Հանրապետության քաղաքացին կարողանալու ա ճամփորդել, դա այդ թվում մեր սխալների, էդ սխալների ընթացքում մեր ձեռք բերած փորձի արդյունքն ա, և ես, այո, շատ ուղիղ սրա մասին ասում եմ:»:*

3.2.10 Ազգային ժողովի պատգամավոր Աննա Գրիգորյանը հնչեցրել է հետևյալ հարցը (տեսաձայնագրության 02:33:49 րոպե). *«Մի փոքր առաջ Նիկոլ Փաշինյանն էստեղ հպարտանում էր, որ Wizz Air-ի ուղղություններն ավելացել են: Ես ուզում եմ մեր քաղաքացիներին հիշեցնել, որ Նիկոլ Փաշինյանի կառավարությունը 4.5 միլիարդ էր տրամադրել FlyArna ավիաընկերությունը ստեղծելու համար, FlyArna կազմակերպությունը տապալվել է, և հարկատուների գրպանից 4.5 միլիարդ դրամ ուղղակի մսխվել է: Դա էլ հերիք չէ, Հայաստանի Հանրապետությանը դատի են տվել, և Air Arabia-ն, որ մաս էր կազմում այս FlyArna կազմակերպությանը, իրենց պնդմամբ, եղել են որոշակի խոստումներ Նիկոլ Փաշինյանի կողմից, որոնք չեն իրականացվել, և այդ հիմքով էլ Հայաստանի Հանրապետությանը դատի են տվել: Նիկոլ Փաշինյանի կառավարության ժամանակ է, որ Հայաստանի*

*Հանրապետությունը հայտնվել է Եվրոպական միության ավիացիոն սև ցուցակում, և մեղմ ասած՝ այդքան էլ տպավորիչ չէ, որ գալիս այստեղից էս ամեն ինչի ֆոնին խոսում եք Wizz Air-ի մի քանի ուղղություններ ավելացման մասին, այն էլ էն դեպքում, եթե չեմ սխալվում, որ Կառավարությունը թռիչքների սուբսիդավորում է իրականացնելու: Եվ էստեղ էլ հարց է առաջանում՝ ընդհանրապես, էդ գումարը ավելի լավ էր տրվեր մեկ այլ ոլորտի, չգիտեմ, նույնիսկ թոշակների բարձրացման, ուսուցիչների աշխատավարձի բարձրացման, թե՞ էս ուղղությունների վրա: Եվ հետո, կոռուպցիայի մասով, էստեղ մի շատ ուրախանալու ի՞նչ առիթ կա, որ մեդիայում դա տարածվում ա: Խնդիրը ոչ թե պետք ա լինի, որ դա հրապարակային կա, ու մենք դրանից մեզ լավ զգանք, պետք ա խնդիրը Ձեր առջև դրված լինի, որ էդ կոռուպցիոն խնդիրները լուծվեն, բացահայտվեն կոռուպցիոներները: Բայց ամեն անգամ էստեղից հարց հնչեցնելուց հետո և որևէ հետևանք չի լինում: Բայց իմ հիմնական խնդիրը, ես վերադառնալու եմ իմ գործընկերոջ հարցին, թաղապետի քաղաքացու ծեծի դեպքն է: Դուք իրավական բան եք ասում, ասում եք դատախազ կա, քննչական կա, թող գնան, զբաղվեն: Բայց Դուք էդ դեպքից հետո քաղաքական պատասխանատվության որևէ խնդիր չե՞ք տեսնում: Իրավականն ասում եք, բա քաղաքակա՞ն պատասխանատվությունը: Էդ դեպքում ուրեմն Դուք նորմալ եք համարում, որ քաղաքական, այսինքն, թաղապետը քաղաքացուն ծեծելուց հետո կարող է շարունակել մնալ որպես թաղապե՞տ: Բա էստեղ քաղաքական պատասխանատվության խնդիր էստեղ չե՞ք տեսնում:»:*

3.2.11 Նշված հարցին ի պատասխան՝ Նիկոլ Փաշինյանը նշել է (տեսաձայնագրության 02:36:04 րոպե). *«Ես չեմ դադարի կրկնել, հարգելի գործընկերներ, որ լավ կլինի, որ մենք բոլորս որևէ բանի մասին խոսելիս վստահ լինենք, որ հասկանում ենք, թե ինչի մասին ենք խոսում: Մասնավորապես, խոսելով Wizz Air ավիաընկերության կատարած հայտարարության մասին, Դուք ասում եք, որ լավ կլիներ էդ գումարները տալ թոշակներին, մինչդեռ չեք արձանագրում, որ Wizz Air ավիաընկերության այս հայտարարությունը նշանակում է, որ հանրապետության ամենատարբեր մարզերում, Երևան քաղաքում տուրիզմի ոլորտում կատարված միլիարդավոր դրամների ներդրումներն արդարանում են, և Wizz Air ընկերությունը տուրիստ բերող ընկերություն է Հայաստանի*

Հանրապետություն, որի գործունեության արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտներն աճելու են, և որի արդյունքում մենք, այդ թվում՝ թոշակները, մնացած պետական ծախսերն ավելացնելու հնարավորություն ենք ունենում: Էլ չեմ ասում, որ Ձեր գործընկերները ժամանակ առ ժամանակ խոսում են՝ բա, Հայաստանում օտարերկրյա ուղիղ ներդրումները: Սա ոչ միայն Հայաստանում օտարերկրյա ուղիղ ներդրում ա, այլև սա միջազգայնորեն էդ ոլորտի ամենահեղինակավոր բրենդի կողմից ազդակ ա միջազգային հանրությանը, որ Հայաստանը ներդրումներ անելու, տնտեսական գործունեություն ծավալելու շատ լավ տեղ է:

Երկրորդը՝ ԱՆԻՖ-ի հետ կապված. այո, ես չեմ դադարի ասել և պնդում եմ, որ, այո, մենք բոլոր հնարավոր և անհնար միջոցները ձեռնարկել ենք և ձեռնարկում ենք, որպեսզի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար ճամփորդելու այլընտրանքային և մատչելի եղանակներ ձևավորվեն: Էդ առավոտից իրիկուն խոսում եք բանի մասին, առավոտից իրիկուն խոսում եք և մենք էլ ենք խոսում գների թանկացման մասին: Դե, եկեք գնանք, նայենք Հայաստանում ավիա, ավիա, ավիատոմսերի գների դինամիկան վերջին 10 տարվա ընթացքում: Բա, էդ քաղաքացու գրպանից չի՞: Դուք ասում եք՝ 4,2 միլիարդ դրամ տվել ա Փաշինյանի կառավարությունը: Փաշինյանի կառավարությունը պետական բյուջեն կրկնապատկել ա և 4,2 միլիարդ դոլարի լրացուցիչ եկամուտ ա բերել Հայաստանի Հանրապետությանը: Ապօրինի բռնագանձված գույքերի և հարակից մեխանիզմների գործադրմամբ 5 միլիարդ դոլարից ավելի գույք, որ էսօր պիտի մնար տարբեր կոռուպցիոներների գրպանում, էսօր ծառայում ա Հայաստանի Հանրապետությանը: Ինչ վերաբերում ա մնացածին, էդ նաև կոռուպցիայի դեմ պայքարը ո՞նց ա. առաջին կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն կետերից մեկը կոռուպցիայի վերաբերյալ իրազեկումն ա, կոռուպցիայի դեպքերի էդ, էդ բաները, լուսարձակները, որ Հայաստանում էդքան սփռված են Կառավարության քաղաքականության շնորհիվ: Չհասկացա, էդ արդեն ձեզ համար տենց սովորական բան ա, հա՞, Հայաստանը որևէ ցուցանիշով աշխարհում 34-րդ տեղն ա, և դե, հա, ի՞նչ ա եղել, որ, հա: Դե բա «հա, ի՞նչ ա եղել», թող լիներ, թող լիներ:

*Ինչ վերաբերում ա Նոր Նորքի դեպքին, ես հստակ քաղաքական գնահատական եմ տալիս. ասում եմ՝ անընդունելի է ինձ համար: Դրա շուրջ վարչական որոշումներ պետք ա լինեն, թե չլինեն՝ ես նախընտրում եմ, որ նախ՝ մենք Երևան համայնքում ունենք գործընկեր, ես նախընտրում եմ, որ մենք էս հարցը աշխատանքային մակարդակով կոմունիկացնենք մեր սիրելի, մեր հարգելի գործընկերներին և մեր դիրքորոշումներն արտահայտենք: Ես հույս ունեմ և համոզված եմ, որ... Ընդ որում, իմանալով նաև «Հանրապետություն» կուսակցության արժեհամակարգը, ես համոզված եմ, որ, օրինակ՝ եթե մեկը ասի, որ «Հանրապետություն» կուսակցությունը էս նույն ընկալումը չունի, ես կզարմանամ շատ խիստ, շատ խիստ, և դրանից պետք ա բխեն կոնկրետ հետևանքներ՝ ամենայն հարգանքով, ամենայն հարգանքով բոլորի նկատմամբ: Ընդ որում, գիտե՞ք ինչ, բոլորս մարդիկ ենք և կարող ենք պահի տակ ինքնատիրապետում կորցնել և այլն, և այլն: Ես չեմ ուզում որևէ... Բայց կա որոշակի կանոն, ի վերջո, մենք մարդ լինելուն զուգահեռ քաղաքացի ենք, պաշտոնյա ենք, և, ի վերջո, Հայաստանի Հանրապետությունը պետություն է և սրանից բխող բոլոր հետևանքներով:»:*

3.2.12 Արձագանքելով Ն.Փաշինյանի նշված խոսքին՝ Ա.Գրիգորյանը նշել է (տեսաձայնագրության 02:40:55 րոպե). *«Նախ, անկեղծ, ես, միևնույնն է՝ չեմ հասկանում, թե էդտեղ հպարտանալու ինչ կա, որ մեդիաներում ամենօրյա ռեժիմով կոռուպցիոն նոր դեպքեր են արձանագրվում: Հպարտանալու տեղ պետք ա լիներ, երբ որ էդ կոռուպցիոն դեպքերը բացահայտվեին: Ես չգիտեմ՝ արդեն որերորդ անգամ պետք ա ասեմ, մի մեղադրյալ, քանի՞ անգամ եմ Ձեզ հարցրել, մի մեղադրյալ եթե ԱՆԻՖ-ի գործով չի ներգրավվում էս գործի մեջ, հիմա Դուք եկել, ի՞նչ եք ասում: Ի՞նչ կոռուպցիայի հետևից գնալ, ի՞նչ բյուջե լցնել կոռուպցիոն էդ նախկին սխեմաների մասով և այլն: Դուք էդ քաղաքական կամքը չունեք՝ Ձեր սեփական թիմին պատասխանատվության ենթարկելու. դա ուղիղ, պարզ ասեք: Հետո էդ հպարտանալու բանը, որ էսքան միլիարդով բերել եք: Մոռանո՞ւմ եք՝ 7 միլիարդ պարտք ենք կուտակել միայն Ձեր կառավարության ժամանակ, ու երբ որ մատս տանեմ, ցույց տամ՝ կոնկրետ ինչի վրա ա գնացել, չկա: Անընդհատ նորոգվող, վերանորոգվող նույն ճանապարհը, նույն ճանապարհը տարին 5 անգամ վերանորոգում եք, դրանից ավել ոչ մի ստրատեգիական նշանակության բան չի*

*կառուցվել: Բայց քաղաքապետի մասով նախ՝ Ձեր կոալիցիոն գործընկերը հստակ հայտարարություն է արել և էդ տվյալ դեպքը կապել աշխարհաքաղաքական տարբեր կենտրոնների դավադրությունների հետ: Դա ա իրենց մոտեցումը, ասեք՝ ուրեմն, դա էլ նաև ձեր մոտեցումն է: Կրկնում եմ՝ կա քաղաքական պատասխանատվություն: Էդ որ գնում եք տարբեր տեղեր «Կրթվելը նորաձև է» արշավ եք իրականացնում, բա էնտեղ մեկը Ձեզ չի՞ հարցնում՝ էդ կրթությանը զուգահեռ, բա օրը ցերեկով 10 հոգով մի մարդու ծեծում են, հետո բերման ա ենթարկվում ծեծվողը և ոչ թե ծեծողը, հետո ծեծվողի և նրա գործընկեր Մեսրոպ Մանուկյանի նկատմամբ ավելի ծանր քրեական հոդված ա դրվում, քան ծեծողի նկատմամբ, բա էդ ամեն ինչը Ձեզ մոտ դիսոնանս որևէ կերպ չի՞ առաջացնում: Հո մենակ բառեր ասելո՞վ չի՝ դատապարտում ենք, դատապարտում ենք, դատապարտումը հստակ գործողություն պետք ա ունենա, թե՞ չպետք ա ունենա:»:*

3.2.13 Նշված հարցին ի պատասխան՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է (տեսաձայնագրության 02:42:39 րոպե). «*Ուրեմն, եթե Դուք դահլիճում էիք, հստակ լսեցիք՝ ես ինչ ասեցի: Եթե դահլիճում էիք, հստակ լսեցիք՝ ես ինչ ասեցի: Երկրորդը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը հստակ արտահայտվեց, և Դուք ուղիղ սուտ եք ասում՝ ասելով, որ մենք ճանապարհը... էն ճանապարհները, որոնք էդ վիճակում են, էդ ճանապարհները չեն ընդունվում, նրանց համար չի վճարվում, չի վճարվում (լսվում են դահլիճից արձագանքներ. «Ամեն օր (հստակ չի լսվում)»): Ավտոն, ավտոն ջարդվում ա, դրա համար էլ կան մեխանիզմներ և հետևանքներ (լսվում է դահլիճից արձագանք. «(հստակ չի լսվում) ճանապարհը չեն... (հստակ չի լսվում)»: Եվ դա, այո, նրանից ա, որ ես ասում եմ, որ ժողովուրդ ջան, հերիք ա ասեք, որ մենք հազարամյակների շինարար ենք. մենք ճամփա սարքել չգիտենք, դպրոց սարքել չգիտենք, շենք սարքել չգիտենք: Հիմա, ինչի՞ մասին եք խոսում, էդ ումի՞ց եք եկել, ի՞նչ եք բողոքում: Այսինքն, (լսվում են դահլիճից արձագանքներ, որոնք հստակ լսելի չեն) ճիշտ եք անում, մենք ենք բողոքում, դուք ե՞ք բողոքում: (դահլիճից լսվում են արձագանքներ, որոնց մի մասը հստակ լսելի չեն, լսվում են հետևյալ արձագանքները. «Բա ի՞նչ ենք անում, դուք ե՞ք...», «... ինչի եք վաճառում», «Տեղից ինչի՞ եք խոսում», «Պարոն Սուքիասյան...») Երկրորդը, երկրորդը, հպարտանալը, ինչ, (լսվում է ԱԺ նախագահի ձայնը՝ պարոն*

*Խաչատրյան, կարո՞ղ եք չխոսել տեղից, (բառը չի լսվում) մի խոսեք») Մի րոպե, մի րոպե կթողե՞ք՝ խոսամ: Հպարտանալու բան կա, որ երկրում 2018 թվականին տեղի ունեցած ժողովրդական, ոչ բռնի, թավշյա հեղափոխության արդյունքում Հայաստանը մամուլի ազատության համաշխարհային ինդեքսում 34-րդ տեղն ա: Էս մեկ, սա հպարտանալու բան ա: Երկրորդը, ասում եք բացահայտում, բացահայտումը սկսվում ա հրապարակայնությունից (դահլիճից արձագանքում են, հստակ լսելի չէ): Երրորդը, բոլոր էն դեպքերում, երբ որ քրեական պատասխանատվության ենթակա մարդ կա, բոլոր էդ դեպքերում քրեական պատասխանատվության մարդը կենթարկվի: Չորրորդը, Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունում մամուլը չի դատական իշխանությունը, Հայաստանի Հանրապետությունում կա դատական իշխանություն: Որ մամուլի հոդվածներով գնայինք, հիմա ձեզ կախաղաններ էինք հանել և Հայաստանից արտաքսել էինք ընդհանրապես: Այսինքն, մամուլի... բա ձեր մասին ի՞նչ են գրում մամուլի հոդվածները, դուք ընդհանրապես ինչի՞ եք ազատ, ձեր մասին գրում են, որ դուք օտարերկրյա շպիոններ եք, ի՞նչ գործ ունեք դուք էս դահլիճում ընդհանրապես նստած: Մամուլի հրապարակումներով առաջնորդվեմ, սաղիդ պիտի տանեմ լցնեմ ԱԱԾ-ի պադվալը (դահլիճից լսվում են արձագանքներ, որոնցից հստակ լսելի է հետևյալը. «Առաջինը դու պտի գնաս», այնուհետև լսվում է ԱԺ նախագահի ձայնը՝ հլը ձեններդ, կամաց): Առաջինը դու պտի գնաս ու դու կգնաս, հերիք ա մամուլի բան անես, մամուլը ձեր մասին ինչ ա գրում, ինչ ա գրում ձեր մասին մամուլը, (լսվում է ԱԺ նախագահի ձայնը՝ լռություն) գրում ա, որ օտարերկրյա գործակալ եք, հինգերորդ անիվ եք, ազդեցության գործակալ եք, մամուլը (ամբողջ ընթացքում դահլիճից լսվում են արձագանքներ, որոնք հստակ լսելի չեն, այնուհետև լսվում է ԱԺ նախագահի արձագանքը՝ մամուլի գրածներին խի՞ եք տենց արձագանքում): Ուրեմն նստեք տեղներդ, ձեններդ կտրեք, ներվերս էլ չուտեք (լսվում է արձագանք՝ դու ձենդ կտրի, լսվում են այլ արձագանքներ, որոնք հստակ լսելի չեն): Ասեցի, վեր ընկի տեղդ, ասեցի, ներվերս չուտես (Նիկոլ Փաշինյանը հեռանում է ամբիոնի մոտից):»:*

3.2.14 Նիկոլ Փաշինյանի՝ ամբիոնի մոտից հեռանալուց հետո լսվում են տարբեր արձագանքներ, որոնք հիմնականում հստակ հասկանալի չեն: Լսելի են հետևյալ խոսքերը՝

- 02:45:40 րոպե՝ «Վեր ընկի տեղդ (չի լսվում), ասում եմ՝ վեր ընկի տեղդ»,
- 02:45:47 րոպե՝ «ձենդ կտրի, արա»,
- 02:45:51 րոպե՝ «այ տղա»,
- 02:45:52 րոպե՝ «համբալի»,
- 02:45:54 րոպե՝ «վեր ընկի տեղդ, վեր ընկի տեղդ»,
- 02:46:01 րոպե՝ «կոռուպցիայի մասին (չի լսվում), կոռուպցիայի մասին հարց եմ տալիս, ինչի՞ եք սենց (չի լսվում)», զուգահեռաբար Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը նշում է՝ լռություն, լռություն դահլիճում,
- 02:46:09 րոպեին Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը նշում է. «Բա խի..., լռություն:»,
- 02:46:11 րոպեին Ազգային ժողովի պատգամավոր Վահագն Ալեքսանյանը նշում է. «Արա, դու կոռուպցիայի սիմվոլն ես, դու քեզ (հստակ չի լսվում), դու կոռուպցիայի մարմնավորումն ես:»
- 02:46:26 րոպեին Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը նշում է. «Նստեք, նստեք, նստեք, նստեք, նստեք, նստեք, նստեք: Մամուլի հրապարակումների մասին բան ասեցին, դուք սկսեցիք ջղաձգվել, նստեք, նստեք, նստեք (լսվում է ենթադրաբար ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի ձայնը՝ մի հատ սուս մնացեք)», 02:46:46 րոպեից մինչև 02:47:10 րոպեն տեսաձայնագրության ձայնը բացակայում է,
- 02:47:10 րոպեին Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը նշում է. «Տիկին Վարդանյան, տիկին Վարդանյան, տիկին Վարդանյան, «դու»-ով կգնաս քո ղեկավարի հետ կխոսաս, Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ «դու»-ով չխոսաս (լսվում է արձագանք՝ վարչապետը (մյուս խոսքերը հստակ լսելի չեն): Ուրեմն, ուրեմն, «դու»-ով չխոսաս, նստի տեղդ, «դու»-ով չխոսաս, եղավ, «դու»-ով չխոսաս, ասում եմ՝ «դու»-ով չխոսաս, (լսվում է արձագանք, որը հստակ հասկանալի չէ, լսելի է միայն «չափերդ» բառը): Չափերիդ մեջ մնա, չափերիդ մեջ մնա, «դու»-ով չխոսաս, դուրս կշպրտեմ քեզ էս դահլիճից, դուրս կշպրտեմ քեզ, ասում եմ՝ դուրս կշպրտեմ, նստի տեղդ, «դու»-ով չխոսաս, ես մինչև իշխանություն ունենալն էլ եմ քո հետ տենց խոսացել ու քո շեֆերի

հետ եմ տենց խոսացել (ամբողջ ընթացքում լսվում են արձագանքներ, որոնք հստակ լսելի չեն): Ընդմիջում: Անջատեք եթերը:»:

- 02:48:07 րոպեից մինչև 02:48:30 րոպեն տեսաձայնագրության ձայնը բացակայում է, 02:48:30 րոպեին Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը նշում է. «Նստեք, նստեք, որպեսզի եթերում լինենք, նստեք, նստեք (լսվում է արձագանք՝ հիմա մեկա եթեր չկա, հանգիստ), նստեք, նստեք, նստեք (լսվում են արձագանքներ՝ «էնա նկարում են», «դե թող (չի լսվում) հրապարակեն») լռություն, լռություն (դահլիճից լսվում է՝ «Ժողովուրդ ջան, լավ, ամոթը քեզ ա, սպանեցիր, արա (չի լսվում)»):

- 02:49:02 րոպեից մինչև 02:49:27 րոպեն տեսաձայնագրության ձայնը բացակայում է, 02:49:28 րոպեին լսվում է. «Անպայման կդնեք էդ նկարածները: Ոնց ենք մենք ձեր հետ վարվում (չի լսվում), տենան:»,

- 02:49:35 րոպեին Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը նշում է. «Հաջորդ հարցի համար (դահլիճից լսվում են ձայներ, որոնք հստակ լսելի չեն, լսվում են «տղա ես», «արի ստեղ, արա», «վախացնում ես», «արի ասեմ» բառերը)», 02:49:47 րոպեից մինչև 02:50:02 րոպեն տեսաձայնագրության ձայնը բացակայում է,

- 02:50:03 րոպեին Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը նշում է. «Ես առաջարկում եմ, ես առաջարկում եմ, ես առաջարկում... ես որքանով գիտեմ, դուք ձեր հարցերը տալիս եք, լքում եք, չէ՞, դահլիճը, լքեք դահլիճը, լքեք, լքեք դահլիճը, բա գնում էիք, չէ՞, դռան մոտ խի՞ էիք կանգնել, տիկին Գրիգորյան (լսվում են արձագանքներ, որոնք հստակ հասկանալի չեն): Ասում եմ լքեք, շարունակենք: Դուք ընդհանրապես մի խոսացեք, Ձեզ ասել եմ՝ հաջորդ անգամ Դուք դուրսն եք հայտնվելու (լսվում են արձագանքներ, որոնք հասկանալի չեն): Վա, բա էլ ով ա որոշում:»:,

- 02:50:38 րոպեից մինչև 02:51:10 րոպեն տեսաձայնագրության ձայնը բացակայում է, 02:51:11 րոպեին Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը նշել է. «Միացրեք էդ, միացրեք եթերը»:

3.3 Հրապարակում 1-ով ներկայացված տեսանյութի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ տեսանյութի 00:08 րոպեին երևում և լսվում է

Ազգային ժողովի՝ 2025 թվականի մայիսի 7-ի վերջին հիմնական նիստի ընդմիջման ընթացքում ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի կողմից հնչեցված հետևյալ խոսքը. «Վեր ընկի տեղդ, արա, է, համբալի մեկը, համբալի մեկը:»: Նույն տեսանյութի 01:39 րոպեին լսվում է 2025 թվականի մայիսի 7-ի վերջին հիմնական նիստի ընդմիջման ընթացքում Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամավորներից մեկի կողմից Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հետ երկխոսության ընթացքում հնչեցված հետևյալ խոսքը. «Հանգստացի, ի՞նչ պիտի անես, հո չես գալու թքես, ի՞նչ ես անելու, հիվանդ են լրիվ:»:

3.4 Հրապարակում 3-ով ներկայացված տեսանյութի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ազգային ժողովի՝ 2025 թվականի մայիսի 7-ի վերջին հիմնական նիստի ընդմիջման ընթացքում Ազգային ժողովի պատգամավորներից մեկը (ենթադրաբար՝ Քրիստինե Վարդանյանը) նշել է. «(դիմում է Ալեն Սիմոնյանին) Հանգստացի ընդհանրապես, հանգստացի, քեզ նորմալ պահի, քեզ նորմալ պահի, չափերդ բոլոր անցել ես, չափերդ բոլոր դու անցել ես, հանգստացի, ի՞նչ պիտի անես, հո չես գալու թքես, ի՞նչ ես անելու, ի՞նչ ես անելու (լսվում է Ազգային ժողովի պատգամավոր Սեյրան Օհանյանի արձագանքը՝ Քրիստինե, մի րոպե): Ղալաթ կանես, փորձի, ի, այ քեզ բան, իշխանություն ա ընկել ձեռդ, հասկացա (լսվում է Ալեն Սիմոնյանի արձագանքը. «Ես մինչև իշխանություն ունենալն էլ եմ տենց խոսացել քո ու քո շեֆերի... (չի լսվում):»): Ի՞նչ ես խոսում, ո՞վ ես դու:»: Նույն տեսանյութում երևում է, որ նշված խոսքին զուգահեռ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կանգնած վիճում է Ազգային ժողովի պատգամավորների հետ, սակայն նրա խոսքը հստակ լսելի չէ: Տեսանյութի 00:36 րոպեին Ն.Փաշինյանը նշում է. «Գնացեք, էսա մամուլի հրապարակումներով (շարունակությունը լսելի չէ)»: Տեսանյութի 00:38 րոպեին լսվում է տեսաձայնագրությունը կատարած պատգամավորի խոսքը՝ կոռուպցիայից ինչի՞ ես սենց ջղաձգվում: Տեսանյութի 00:46 րոպեին լսվում են Նիկոլ Փաշինյանի խոսքերը. «Մամուլի հրապարակումներով գալու ենք հետևներիցդ:»: Ազգային ժողովի պատգամավոր Քրիստինե Վարդանյանի՝ «Ֆեյսբուք» սոցիալական կայքում «Քրիստինե

Վարդանյան» էջի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Հրապարակում 3-ով ներկայացված տեսանյութը հրապարակվել է նշված էջում[5]:

3.5 Հրապարակում 4-ով ներկայացված տեսանյութի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ դրանում երևում է Ազգային ժողովի՝ 2025 թվականի մայիսի 7-ի վերջին հիմնական նիստի ընդմիջման ընթացքում ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի և Ազգային ժողովի պատգամավորների միջև վիճաբանության մի հատվածը, որի հիմնական մասը լսելի չէ: Լսելի են հետևյալ խոսքերը՝

- 00:58 րոպեին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է. «(հստակ չի լսվում), որ մի հատ էլ եկել, մամուլի հրապարակումներից ես խոսում: Որտեղի՞ց քեզ Սևանի ափին տուն: Դու ի՞նչ իրավունք ունես Սևանի ափին տուն ունենաս, մի հատ էլ (կանգնում է) գաս ստեղ (շարունակությունը հստակ չի լսվում, լսվում են նաև պատգամավորների արձագանքներ, որոնք հասկանալի չեն): Արա, մի հատ վեր ընկի տեղդ, արա, է, համբալի մեկը, համբալի մեկը:»,
- 2:57 րոպեին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է. «Դե թող տանի, հրապարակի: Թող տանի հրապարակի: Հույս ունեմ՝ նկարել ա, հրապարակի: (հստակ չի լսվում) ներվերս կերել եք, ստեղս եք հասցրել (նշվածին զուգահեռաբար ՀՀ վարչապետը աջ ձեռքի բութ մատը անցկացնում է իր պարանոցով):»:

## IV. Վարքագծի կանոնների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

*«3. Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:»:*

4.2 Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

[5] Հասանելի՝ https://www.facebook.com/reel/1709916926577884

*«2. Պետական քաղաքական պաշտոններն են (...) վարչապետի (...) պաշտոնները, (...) :»:*

4.3 Օրենքի 25-րդ հոդվածով նախատեսվում է բարեկրթության և հարգալիրության սկզբունքը և սահմանվում է.

*«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները դրսևորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսևորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս:*

*2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները հարգում են իրենց վերադասների, անմիջական ղեկավարների, գործընկերների, ենթակաների արժանապատվությունը:»:*

4.4 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

*«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:*

*(...)*

*3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները:*

*(...)»:*

4.5 Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց

տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) 1-ին կետի համաձայն.

*1. (...) կանոնագիրքը վարքագծի կանոնների ամբողջություն է, որով պետք է առաջնորդվեն հանրային պաշտոն զբաղեցնող անձինք:»:*

4.6 Կանոնագրքի 36-րդ կետի համաձայն.

*«36. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս, ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն:»:*

4.7 Կանոնագրքի 37-րդ կետի համաձայն՝

*«37. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության դեպքում), այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը:»:*

4.8 Կանոնագրքի 39-րդ կետի համաձայն՝

*«39. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը, պաշտոնեական (ծառայողական) լիազորություններն իրականացնելիս, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, պարտավոր է չգործադրել ֆիզիկական ուժ կամ չներկայացնել դրա կիրառման սպառնալիք, չգործադրել հոգեբանական կամ այլ տեսակի բռնություն կամ չներկայացնել դրա կիրառման սպառնալիք, ինչպես նաև՝ զերծ մնալ այլ անձանց նկատմամբ ոտնձգության ցանկացած դրսևորումից:»:*

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի համաձայն.

*«1. Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:*

*2. Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի*

*բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:*

*3. Եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում), իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ համապատասխանաբար Կառավարություն կամ Հայաստանի Հանրապետության վարչապետին:*

*(...)*

*6. (...)*

*Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական համապատասխան պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման կամ շահերի բախման վերաբերյալ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որն ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի կայքէջում, որտեղ պաշտոն զբաղեցնող անձն զբաղեցնում է պաշտոն:*

## V. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Նկատի ունենալով, որ սույն վարույթի շրջանակներում քննարկվում է Նիկոլ Փաշինյանի հնչեցրած խոսքի իրավաչափության հարցը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նշված դեպքում կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմաններին:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության,*

*հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

*«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (...)*

*2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»*:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ արտահայտման ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից և դրա զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է: Արտահայտման ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարենպաստ կերպով են ընդունվում կամ դիտարկվում են որպես ոչ վիրավորական կամ արժանանում են անտարբերության, այլ նաև այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք վիրավորում, ապշեցնում կամ անհանգստացնում են: Այսպիսին են բազմակարծության,

հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն»:

Եվրոպական դատարանը նշել է, որ արտահայտման ազատությունը ենթակա է բացառությունների, որոնք, սակայն, պետք է խիստ կերպով մեկնաբանվեն և նման սահմանափակումների անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատվի:[6]

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի ներքո քաղաքական խոսքի սահմանափակման հնարավորությունը հատկապես նեղ է:[7] Ազատ քաղաքական բանավեճի խթանումը ժողովրդավարական հասարակության կարևոր տարրերից է և Եվրոպական դատարանը գտնում է, որ նման բանավեճի շրջանակներում արտահայտման ազատությունը բարձրագույն մակարդակի կարևորություն ունի:[8] Եվրոպական դատարանը նաև փաստել է, որ քաղաքական խոսքի կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ քաղաքական բանավեճի իրավաչափ սահմանափակումների շրջանակը նեղ է:[9] Քաղաքական խոսքի լայն սահմանափակումների կիրառումն, անկասկած, անդրադարձ կունենա տվյալ պետությունում արտահայտման ազատության նկատմամբ հարգանքի ընդհանուր մակարդակի վրա:[10] Միաժամանակ, քաղաքական բանավեճի ազատությունն իր բնույթով բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների կամ դրա շրջանակներում հնչեցված տեղեկատվության կամ գաղափարների համար կարող են սահմանվել պատասխանատվության միջոցներ:[11] Եվրոպական դատարանն ընդգծել է,

---

[6] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 42, Կարակսոնին և այլոք ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Karácsony and Others v. Hungary[GC]) գործով 2016 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմումներ nos. 42461/13, 44357/13, §132, Ինկալն ընդդեմ Թուրքիայի (ՄՊ) (Incal v. Turkey[GC]) գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, դիմում no. 22678/93, § 46

[7] Տես, օրինակ, ՆԻՏ Ս.Ռ.Լ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (ՄՊ) (NIT S.R.L. v. the Republic of Moldova [GC]) գործով 2022 թվականի ապրիլի 5-ի վճիռը, դիմում no. 28470/12, § 178

[8] Տես, օրինակ, Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի (Feldek v. Slovakia) գործով 2001 թվականի հուլիսի 12-ի վճիռը, դիմում no. 29032/95, § 83

[9] Տես, օրինակ, Լոմբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 55

[10] Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռ, դիմում no. 10883/05, § 33

[11] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 46, Էրբականն ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռը, դիմում no. 59405/00, § 55

որ հանրային հետաքրքրություն ներկայացնող (կամ հանրային շահին առնչվող) հարցերով **քաղաքական բանավեճի մասնակցելիս անձինք պետք է չանցնեն այլոց իրավունքների նկատմամբ հարգանքի որոշակի սահմանները:** Միաժամանակ, նման դեպքերում **թույլատրելի է չափազանցության կամ անգամ սադրանքի որոշակի աստիճանը, այսինքն՝ իր արտահայտություններում անձը կարող է որոշ չափով անզսպություն դրսևորել:**[12]

Եվրոպական դատարանը նաև բազմիցս նշել է, որ ժողովրդի ընտրած ներկայացուցիչների, քաղաքական կուսակցությունների և նրանց ակտիվ անդամների արտահայտման ազատությունը հատկապես կարևոր է:[13]

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը մշտապես հատկապես ընդգծել է խորհրդարանի անդամների արտահայտման ազատության կարևորությունը՝ համարելով այն *par excellence* քաղաքական խոսք: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ խորհրդարանում խոսքը ավելի բարձր մակարդակի պաշտպանությամբ է օժտված, ինչի մասին է վկայում նաև պատգամավորական անձեռնմխելիության առկայությունը:[14] Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ չնայած արտահայտման ազատությունը կարևոր է բոլորի համար, այն հատկապես կարևոր է ժողովրդի ընտրած ներկայացուցիչների համար: Վերջիններս ներկայացնում են իրենց ընտրազանգվածին, ուշադրություն են գրավում նրանց մտահոգությունների նկատմամբ և պաշտպանում են նրանց շահերը: Համապատասխանաբար, այս անձանց արտահայտվելու ազատության նկատմամբ միջամտությունների իրավաչափությունը ենթակա է Եվրոպական դատարանի կողմից խստագույն քննության:[15] Եվրոպական դատարանը, բացի խորհրդարանների պատգամավորներից, համանման մոտեցում է

---

[12] Տես, օրինակ, Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, դիմում no. 10883/05, § 33

[13] Տես, օրինակ, Սանչեզն ընդդեմ Ֆրանսիայի (ՄՊ) (Sanchez v. France [GC]) գործով 2023 թվականի մայիսի 15-ի վճիռը, դիմում no. 45581/15, § 147

[14] Տես Կարակսոնին և այլոք ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Karácsony and Others v. Hungary [GC]) գործով 2016 թվականի մայիսի 17-ի վճիռը, դիմումներ nos. 42461/13, 44357/13, §§ 137-138

[15] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 42, Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի (Jerusalem v. Austria) գործով 2001 թվականի փետրվարի 27-ի վճիռը, դիմում no. 26958/95, § 36

դրսևորել նաև տեղական կամ համայնքային խորհուրդների անդամների[16], այդ թվում՝ քաղաքապետերի[17] խոսքի նկատմամբ միջամտության իրավաչափությունը գնահատելիս:

Ինչ վերաբերում է այն անձի կարգավիճակին, ում նկատմամբ ուղղված է եղել խուսքը, ապա Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ թույլատրելի կամ իրավաչափ քննադատության սահմաններն ավելի լայն են, երբ այն ուղղված է քաղաքական գործչի, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջինների՝ քաղաքական գործիչներն անխուսափելիորեն և գիտակցաբար իրենց խոսքը և գործողությունները ենթակա են դարձնում լրագրողների և լայն հանրության կողմից մանրակրկիտ զննության և հետևաբար պետք է դրսևորեն ավելի մեծ հանդուրժողականություն, հատկապես, **երբ հենց իրենք կատարում են այնպիսի հանրային հայտարարություններ, որոնք հավանական է, որ քննադատության կենթարկվեն:**[18]

Քաղաքական բանավեճի շրջանակներում կատարված վիրավորանքների իրավաչափությունը գնահատելիս Եվրոպական դատարանը հատկապես կարևորել է այն հանգամանքը՝ արդյոք կատարված վիրավորանքները ունեցել են փաստական հենք: Մի շարք գործերով[19] Եվրոպական դատարանն արձանագրել է, որ թեև դիմողի արտահայտությունները վիճահարույց են, սակայն դրանք չեն կարող համարվել անհիմն անձնական հարձակում (gratuitous personal attack), քանի որ դրանց հեղինակը հիմնվում է օբյեկտիվ բացատրության վրա: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ առանց փաստական հենքի նման արտահայտությունները կարող էին ավելորդ համարվել: Մեկ այլ գործի շրջանակներում Եվրոպական դատարանը կարևորել է, որ

---

[16] Տես, օրինակ, Լոմբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 53

[17] Տես, օրինակ, Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, դիմում no. 10883/05, § 32

[18] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 46, Լոբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 54, Ռոզեյրո Բենտոն ընդդեմ Պորտուգալիայի (Roseiro Bento v. Portugal) գործով 2006 թվականի ապրիլի 18-ի վճիռը, դիմում no. 29288/08, § 42

[19] Տես, օրինակ, Լոպես Գոմես դա Սիլվան ընդդեմ Պորտուգալիայի (Lopes Gomes da Silva v. Portugal) գործով 2000 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռ, դիմում no. 37698/97, § 34, Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի (Oberschlick v. Austria (No. 2)) գործով 1997 թվականի հուլիսի 1-ի վճիռը, դիմում no. 20834/92, §§ 32-33

քաղաքական բանավեճի ընթացքում կատարված արտահայտությունն ուղղակի կապ է ունեցել այդ բանավեճի կոնտեքստի հետ և կիրառվել է որպես քաղաքական գործիչների գործունեության քննադատություն:[20]

Եվրոպական դատարանը նաև կարևոր է համարել այն հանգամանքը՝ արդյոք հնչեցված արտահայտությունները որևէ կերպ նպաստում են քաղաքական բանավեճին: Այսպես, օրինակ, Էրբականն ընդդեմ Թուրքիայի գործի շրջանակներում Եվրոպական դատարանը նշել է, որ արտահայտման ազատությունը ենթադրում է պարտականություններ, որոնք ներառում են այնպիսի արտահայտությունների կիրառումից խուսափումը, որոնք այլոց անհիմն կերպով վիրավորում են և այդպիսով խախտում նրանց իրավունքները և որոնք, ըստ այդմ, որևէ կերպ չեն նպաստում հանրային բանավեճին:[21]

Հանձնաժողովը 2024 թվականի օգոստոսի 14-ի թիվ 08/2024/Վ/Վ եզրակացությամբ անդրադարձել է քաղաքական բանավեճի շրջանակներում Կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի կիրառելիությանն ու մեկնաբանությանը՝ արձանագրելով հետևյալը.

*«Հանձնաժողովն արձանագրում է, որ **քաղաքական բանավեճի ընթացքում սադրիչ կամ անգամ կոպիտ բառամթերքի օգտագործումը կարող է ակնկալելի լինել, հատկապես երբ բանավեճը վերաբերում է տվյալ հասարակությունում լայնորեն քննարկված կամ բարձր կարևորություն ունեցող հարցերի: Քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք անխուսափելիորեն բախվում են հանրային քննադատության և կարող են ակնկալել, որ նման քննադատությունը ոչ միշտ է, որ ձևակերպված է լինելու մեղմ բառամթերքով և ոճով, հատկապես, երբ իրենք ևս կիրառել են սադրիչ ու վիրավորական խոսք:***

*Վարքագծի կանոնակարգի 36-րդ և 37-րդ կետերով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն,*

---

[20] Շարսախը և Նյուզ Ֆերլագսգեզելշաֆթն ընդդեմ Ավստրիայի (Scharsach and News Verlagsgesellschaft v. Austria) գործով 2003 թվականի նոյեմբերի 13-ի վճիռ, դիմում no. 39394/98, § 44

[21] Էրբականն ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռ, դիմում no. 59405/00, § 55

*զսպվածություն ցուցաբերելու և այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունները:*

*Նշված կանոնները ենթադրում են, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք իրենց լիազորություններն իրականացնելիս պետք է խուսափեն այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց պատիվը կամ արժանապատվությունը վիրավորող արտահայտությունների կիրառումից:* ***Զսպվածության պարտականությունը ենթադրում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պետք է քաղաքավարի և բարեկիրթ լինեն՝ անկախ դիմացինի վարքագծից:***

*(...) Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքական բանավեճի շրջանակներում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից վերոնշյալ կանոններով սահմանված բարեկրթության, քաղաքավարության, զսպվածության և այլոց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականության խախտում արձանագրելու շեմն ավելի բարձր է, քան այլ լիազորությունների կատարման շրջանակներում դրսևորած վարքագծի դեպքում: Այլ խոսքերով, վարքագիծը, որն այլ լիազորությունների կատարման շրջանակներում կարող է դիտարկվել որպես Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կանոններին ոչ համապատասխան, քաղաքական բանավեճի դեպքում կարող է իրավաչափ դիտվել:*

*Միաժամանակ, Հանձնաժողովը կարևոր է համարում արձանագրել, որ անգամ քաղաքական բանավեճի շրջանակներում կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել. խիստ անձնական բնույթի կամ* ***քաղաքական բանավեճի թեմայի և համատեքստի հետ որևէ կերպ չկապված վիրավորական արտահայտությունների կիրառումը չի կարող Վարքագծի կանոնագրքի՝ վերոնշյալ կարգավորումների համատեքստում իրավաչափ դիտվել, անգամ երբ խոսքը գնում է խորհրդարանում կամ դրա հետ համեմատելի այլ ատյաններում քաղաքական բանավեճի մասին:***

*(...) Վարքագծի կանոնագրքի 36-րդ կետով սահմանված զսպվածություն պահպանելու պարտականությունը ենթադրում է, որ անգամ քաղաքական բանավեճի ընթացքում սադրիչ և վիրավորական խոսքի բախվելու պարագայում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք չպետք է հատեն բարեկրթության և այլոց պատվի ու արժանապատվության նկատմամբ հարգանքի որոշակի սահմանը:»:*

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի դրսևորած վարքագծին՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում առանձին քննարկել հետևյալ երկու դրվագների շրջանակներում վարքագծի կանոնների խախտման առկայության հարցը՝

1) Ազգային ժողովի պատգամավոր Աննա Գրիգորյանի հարցին պատասխանելիս ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հնչեցրած խոսքերը,

2) նշված խոսքերին հաջորդած միջադեպի ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի վարքագիծը:

Անդրադառնալով առաջին դրվագին՝ Հանձնաժողովը նախ ընդգծում է, որ Նիկոլ Փաշինյանի հնչեցրած խոսքը կատարվել է Ազգային ժողովի նիստի ընթացքում, որին վերջինս հանդես է եկել որպես ՀՀ վարչապետ՝ պատասխանելով Կառավարությանն ուղղված՝ պատգամավորների հարցերին: Հանձնաժողովն արձանագրում է, որ խորհրդարանը քաղաքական բանավեճի առանցքային ամբիոնն է, ուստի ՀՀ վարչապետի և Ազգային ժողովի պատգամավորների երկխոսությունը պետք է դիտարկվի քաղաքական բանավեճի ընթացքում արտահայտման ազատության սահմանափակման չափանիշների կիրառմամբ:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ հենց ՀՀ վարչապետի արտահայտման ազատությանը՝ պայմանավորված նրա կարգավիճակով: Այսպես, ՀՀ Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվելուց հետո անհապաղ վարչապետ է նշանակում Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված կարգով ձևավորված խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին:

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների երկրորդ փուլի քվեաթերթիկում նշվում է ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանումը և վարչապետի թեկնածուի անունը:

Վերոգրյալ կարգավորումներից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ վարչապետը թեև անմիջականորեն ընտրվող պաշտոնատար անձ չէ, սակայն վարչապետի թեկնածուն էական նշանակություն ունի խորհրդարանական

ընտրությունների շրջանակներում, ինչի մասին վկայում է այն հանգամանքը, որ վարչապետի թեկնածուն, ըստ էության, որոշվում կամ ընտրվում է խորհրդարանական մեծամասնության կողմից, հետևաբար, խորհրդարանական ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք նախընտրական քարոզչության շրջանակներում, որպես կանոն, հրապարակային է դարձնելու նաև վարչապետի իր թեկնածուի ինքնությունը: Բացի այդ, էական է նաև այն հանգամանքը, որ Ազգային ժողովի ընտրությունների երկրորդ փուլի քվեաթերթիկում նշվում է նաև ՀՀ վարչապետի թեկնածուի անունը:

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ վարչապետն անուղղակի կերպով ընտրվում է խորհրդարանական ընտրությունների շրջանակներում, ուստի ՀՀ վարչապետը, հաշվի առնելով նաև, որ նա քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ է, պետք է օգտվի արտահայտման ազատության հատկապես լայն սահմաններից, որոնք, այնուամենայնիվ, չեն կարող նույնանալ պատգամավորական խոսքի արտահայտման ազատության առավել լայն շրջանակների հետ՝ նկատի ունենալով ժողովրդավարական հասարակությունում խորհրդարանական խոսքի առանձնահատուկ կարևորությունը:

Հանձնաժողովը կարևորում է նաև այն հանգամանքը, որ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի խոսքն ուղղված է եղել Ազգային ժողովի պատգամավորներին, որոնք, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք և քաղաքական գործիչներ, պետք է առավել մեծ հանդուրժողականություն դրսևորեն իրենց ուղղված անգամ սադրիչ կամ վիրավորական խոսքի նկատմամբ: Միաժամանակ, նույնը վերաբերում է ՀՀ վարչապետին:

Հանձնաժողովը նաև հարկ է համարում նկատել, որ Ազգային ժողովի պատգամավոր Աննա Գրիգորյանի և ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարցուպատասխանն առնչվել է հանրային հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի, որոնց պարագայում ևս արտահայտման ազատության սահմանափակման շրջանակը հնարավորինս նեղ է: Այսպես, հարցուպատասխանը վերաբերել է դեպի Հայաստան և Հայաստանից մեկնող ավիաուղիների ավելացմանը, հայկական ավիաընկերություն հիմնելու Կառավարության փորձերին և այդ գործընթացում առկա խնդիրներին, զանգվածային լրատվության միջոցների կողմից ենթադրյալ կոռուպցիոն բնույթի դեպքերի վերաբերյալ կատարած հրապարակումներին և իրավասու

մարմինների արձագանքին, Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի մասնակցությամբ ծեծին և դրա հետ կապված՝ քաղաքական պատասխանատվության կիրառմանը, ապօրինի գույքի բռնագանձմանը, մամուլի ազատությանը:

Հանձնաժողովն ընդգծում է, որ նշված հարցերին Ազգային ժողովի նիստի ընթացքում անդրադարձ է կատարվել տարբեր պատգամավորների կողմից՝ Կառավարության անդամներին ուղղված հարցերի շրջանակներում, որոնց մի մասը, այդ թվում, հնչեցվել են բարձրատոն և բարկացկոտ երանգով: Միաժամանակ, Հանձնաժողովը կարևորում է այն հանգամանքը, որ թեև Ազգային ժողովի պատգամավոր Աննա Գրիգորյանն իր հարցերը հնչեցրել է հանդիմանական տոնով և սուր քննադատական ոճով, այնուամենայնիվ, նրա հնչեցրած արտահայտությունները ամբողջությամբ կրել են քննադատական բնույթ և իմաստային առումով կապակցվել են իր խոսքին, պատգամավորը չի հնչեցրել քննադատական բնույթ չունեցող և միայն վիրավորելու նպատակ ունեցող արտահայտություններ:

Այս համատեքստում դիտարկելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Ազգային ժողովի պատգամավոր Աննա Գրիգորյանի հարցին պատասխանելիս հնչեցված խոսքը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված խոսքն առաջին հերթին ուղղված է եղել հնչեցված հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ Կառավարությանն ուղղված քննադատությանն արձագանքելուն և նշված հարցերը հասցեագրելուն կամ կատարված քաղաքական բնույթի պնդումներին հակափաստարկներ ներկայացնելուն: Սույն եզրակացության 3.2.13 կետում ներկայացված՝ ՀՀ վարչապետի խոսքի մի մասը կատարվել է խիստ բարձրատոն և բարկացկոտ երանգով, սակայն, նշված խոսքը չի ներառել պատգամավորներին ուղղված անձնական բնույթի վիրավորանքներ: Բացի այդ, նշված խոսքի մի մասը («*Մամուլի հրապարակումներով առաջնորդվեմ, սաղիդ պիտի գանեմ լցնեմ ԱԱԾ-ի պադվալը* ***(դահլիճից լսվում են արձագանքներ, որոնցից հստակ լսելի է հետևյալը. «Առաջինը դու պտի գնաս»,*** *այնուհետև լսվում է ԱԺ նախագահի ձայնը՝ հլը ձեններդ, կամաց):* ***Առաջինը դու պտի գնաս ու դու կգնաս, հերիք ա մամուլի բան անես, մամուլը ձեր մասին ինչ ա գրում, ինչ ա գրում ձեր մասին մամուլը,*** *(լսվում է ԱԺ նախագահի ձայնը՝ լռություն)* ***գրում ա, որ օտարերկրյա գործակալ եք, հինգերորդ անիվ եք, ազդեցության գործակալ եք, մամուլը:*** *(ամբողջ ընթացքում դահլիճից լսվում*

*են արձագանքներ, որոնք հստակ լսելի չեն, այնուհետև լսվում է ԱԺ նախագահի արձագանքը՝ մամուլի գրածներին խի՞ եք տենց արձագանքում): **Ուրեմն նստեք տեղներդ, ձեններդ կտրեք, ներվերս էլ չուտեք** (լսվում է արձագանք՝ դու ձենդ կտրի, լսվում են այլ արձագանքներ, որոնք հստակ լսելի չեն): Ասեցի, վեր ընկի տեղդ, ասեցի, ներվերս չուտես (Նիկոլ Փաշինյանը հեռանում է ամբիոնի մոտից, այնուհետև լսելի են բազմաթիվ ձայներ, որոնք հստակ հասկանալի չեն):»)* կատարվել է Ազգային ժողովի պատգամավորների հետ ընթացիկ վիճաբանության ընթացքում, որի շրջանակներում փոխադարձաբար հնչել են արհամարհական նրբերանգով, բարձրատոն և բարկացկոտ արտահայտություններ, որոնք, այնուամենայնիվ, ուղղակիորեն կապված են եղել քննարկվող՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի հետ, մասնավորապես՝ կոռուպցիոն բնույթի դեպքերի կամ այլ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա քննություն իրականացնելու կամ դրանց այլ կերպ արձագանքելու հետ: Այսպես, Ազգային ժողովի նշված նիստի ընթացքում «Հայաստան» խմբակցության պատգամավորները (Քրիստինե Վարդանյան, Գեղամ Մանուկյան, Աննա Գրիգորյան) մի քանի անգամ հնչեցրել են զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների վերաբերյալ հարցեր՝ նշելով, որ դրանց պատշաճ ընթացք չի տրվում և համապատասխան քննություն չի իրականացվում կամ քաղաքական պատասխանատվության պաշտոնատար անձինք չեն ենթարկվում: Ըստ այդմ, իր խոսքում ՀՀ վարչապետն անդրադարձել է զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին, նշել, որ ընդդիմության ներկայացուցիչների վերաբերյալ ևս բազմաթիվ հրապարակումներ են իրականացվում՝ մեղադրելով նրանց «օտարերկրյա գործակալ, հինգերորդ անիվ, ազդեցության գործակալ» լինելու մեջ: Ըստ այդմ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը եզրակացրել է՝ «Ուրեմն նստեք տեղներդ, ձեններդ կտրեք, ներվերս էլ չուտեք»՝ նկատի ունենալով, որ իր կարծիքով ընդդիմադիր պատգամավորները չեն կարող իշխանության ներկայացուցիչների վերաբերյալ ԶԼՄ հրապարակումները հիմք ընդունել Կառավարությանը քննադատելու համար, քանի որ իրենց ենթադրյալ հանցանքների կատարման մեջ մեղադրող հրապարակումներ ևս առկա են:

Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նշված խոսքը սադրիչ և ցնցող (shocking) է՝ նրա բարձր տոնայնության և չափազանցությունների,

խոսակցական ոճի ու երբեմն վիրավորական երանգավորմամբ բառերի կիրառման հետևանքով: Այնուամենայնիվ, Հանձնաժողովի գնահատմամբ, վարչապետի խոսքն ուղղված է քննադատություններին արձագանքելուն և իմաստային առումով կիրառված ցնցող արտահայտությունները ամբողջությամբ կապակցվում են պատգամավորների ներկայացրած հարցերին: Հանձնաժողովը կրկին ընդգծում է, որ քաղաքական բանավեճի ընթացքում պաշտոնատար անձինք կարող են դիմել սադրիչ, ցնցող, անգամ վիրավորական խոսքի, եթե դրա կիրառումը չի հանգեցնում խիստ անձնական բնույթի վիրավորանքների կամ քաղաքական բանավեճի թեմայի և համատեքստի հետ որևէ կերպ չկապված վիրավորական արտահայտությունների կիրառման:

Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքն իր ոճով, բնույթով և բովանդակությամբ չի անցել քաղաքական բանավեճի շրջանակներում քննադատական խոսքին արձագանքելիս չափազանցությունների, սադրիչ և ցնցող թույլատրելի խոսքի կիրառման սահմանը և ուստի չի կարող եզրակացվել, որ ՀՀ վարչապետի խոսքի նշված մասը խախտում է Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի պահանջները:

Անդրադառնալով Վարքագծի կանոնագրքի 39-րդ կետի հնարավոր խախտմանը՝ Հանձնաժողովն ընդգծում է, որ նշված դրույթով սահմանվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի պարտականությունը՝ չներկայացնելու ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն գործադրելու սպառնալիք: Հարուցման որոշմամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կիրառած՝ «առաջինը դու պտի գնաս (ԱԱԾ պադվալ, նշումը՝ Հանձնաժողովի) ու դու կգնաս» արտահայտությունը կարող է առերևույթ կերպով ընկալվել որպես ազատությունից զրկելու վերաբերյալ սպառնալիք, քանի որ Ազգային անվտանգության ծառայության վարչական շենքում է գտնվում «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշված արտահայտության կիրառման իրավաչափությունը գնահատել Ն.Փաշինյանի խոսքի ընդհանուր համատեքստի և բովանդակության քննարկմամբ, այդ թվում՝ հաշվի առնելով Ազգային ժողովի պատգամավորների այն հարցերը կամ պնդումները, որոնց վերաբերել է Ն.Փաշինյանի խոսքը: Այսպես, ինչպես նշվեց, Ազգային ժողովի նշված նիստի ընթացքում մի շարք պատգամավորներ հնչեցրել են զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների

վերաբերյալ հարցեր՝ նշելով, որ դրանց պատշաճ ընթացք չի տրվում և համապատասխան քննություն չի իրականացվում կամ քաղաքական պատասխանատվության պաշտոնատար անձինք չեն ենթարկվում: Ըստ այդմ, սույն եզրակացության 3.2.13 կետով ներկայացված խոսքի ընթացքում ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանն անդրադարձել է զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա ընդդիմադիր պատգամավորների քննադատությանը և քրեական արդարադատության համակարգի աշխատանքին՝ նշելով, որ «մամուլը չի դատական իշխանությունը»՝ նկատի ունենալով, որ ենթադրյալ հանցանքի վերաբերյալ ԶԼՄ հրապարակման առկայությունը չի վկայում տվյալ անձի կողմից նրան վերագրվող հանցանքը կատարած լինելու մասին, քանի դեռ դա չի հաստատվել դատարանի դատավճռով: Այս նույն տրամաբանությամբ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանն արձագանքել է նաև Ազգային ժողովի պատգամավոր Քրիստինե Վարդանյանի հարցին՝ նշելով, որ «մենք որևէ ամբիոնից որևէ մեկի անմեղության կանխավարկածը խախտելու իրավունք չունենք»:

Ըստ այդմ, Նիկոլ Փաշինյանի խոսքերն առ այն, որ եթե մամուլի հոդվածներով գնային, հիմա նրանց (ընդդիմադիր պատգամավորներին) կախաղաններ էին հանել ու Հայաստանից արտաքսել էին, վերաբերում են նրան, որ ինչպես իշխանության ներկայացուցիչ պաշտոնատար անձանց մասին են առկա ԶԼՄ հրապարակումներ ենթադրյալ հանցանքների կատարման մասին, այնպես էլ նման հրապարակումներ են առկա ընդդիմադիր գործիչների վերաբերյալ և եթե միայն մամուլի հրապարակումների հիման վրա անձինք պատասխանատվության ենթարկվեին, ապա ընդդիմադիր գործիչները ենթարկված կլինեին էլ ավելի ծանր պատասխանատվության: Սա հաստատվում է այն հանգամանքով, որ շարունակելով Նիկոլ Փաշինյանը նշում է՝ բա ձեր մասին ի՞նչ են գրում մամուլի հոդվածները, դուք ընդհանրապես ինչի՞ եք ազատ, ձեր մասին գրում են, որ դուք օտարերկրյա շպիոններ եք: Ըստ այդմ, ՀՀ վարչապետն ընդգծում է այն հանգամանքը, որ պարզապես ԶԼՄ հրապարակման առկայությունը չի վկայում այն մասին, որ անձն անպայմանորեն կատարել է իրեն վերագրվող արարքը և ձգտում է հակադարձել ԶԼՄ հրապարակումների վկայակոչմամբ Կառավարության հասցեին հնչեցված քննադատությանը: Նշված խոսքերից հետո է, որ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը նշում է. «մամուլի հրապարակումներով առաջնորդվեմ, սաղիդ պիտի

տանեմ, լցնեմ ԱԱԾ-ի պադվալը»: Այս խոսքերին դահլիճից արձագանքում են՝ առաջինը դու պիտի նստես, ինչին ՀՀ վարչապետը պատասխանում է նույնական արտահայտության կիրառմամբ՝ առաջինը դու պիտի նստես ու դու կնստես:

Հանձնաժողովը կարծում է, որ ՀՀ վարչապետի նշված խոսքը չի կարող հասկացվել որպես պատգամավորներին ազատությունից զրկելու ուղղակի սպառնալիք, այլ պետք է դիտարկվի մինչ այդ պատգամավորների հետ առկա երկխոսության և ՀՀ վարչապետի ամբողջ խոսքի բովանդակության համատեքստում: Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը ոչ թե նպատակ է ունեցել սպառնալ Ազգային ժողովի պատգամավորներին, որ նրանք կզրկվեն ազատությունից, այլ ընդգծել է իր կարծիքով ՀԼՄ հրապարակումների հիման վրա միանշանակ հետևություններ կատարելու խնդրահարույց բնույթը և հակադարձել է ընդդիմադիր պատգամավորների խոսքին՝ փորձելով ցույց տալ, որ նրանց հետ կապված առկա են նույնպիսի խնդիրներ, ինչպես որ իշխանության ներկայացուցիչ պաշտոնատար անձանց դեպքում: Նշված խոսքերի սադրիչ բնույթը հանգեցրել է Ազգային ժողովի պատգամավորների հետ վիճաբանության, որի շրջանակներում արդեն ՀՀ վարչապետը պատասխանել է դահլիճից արձագանքին՝ կրկնելով հնչեցրած խոսքերը (պատգամավորը նշել է. «առաջինը դու պիտի նստես», ՀՀ վարչապետը նշել է. «առաջինը դու պիտի նստես ու դու կնստես»):

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովը եզրակացնում է, որ ՀՀ վարչապետը նշված խոսքերով նպատակ չի ունեցել ֆիզիկական բռնություն կիրառելու՝ առանց օրինական հիմքերի ազատությունից զրկելու, սպառնալիք հնչեցնել, ըստ այդմ, այս դրվագի առնչությամբ Վարքագծի կանոնագրքի 39-րդ կետի խախտման հատկանիշները բացակայում են:

Անդրադառնալով երկրորդ դրվագին, մասնավորապես՝ առաջին դրվագին անմիջապես հաջորդած միջադեպի շրջանակներում Ն.Փաշինյանի վարքագծին՝ Հանձնաժողովը նախ հարկ է համարում ընդգծել, որ այն անմիջապես հաջորդել է քաղաքական բանավեճին, այնուամենայնիվ, չի պարունակել հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ բանավիճելու տեսանկյունից իմաստային լրացուցիչ արժեք:

Նշված միջադեպի զգալի մասը լսելի չի եղել հանրությանը, և ՀՀ վարչապետի և Ազգային ժողովի պատգամավորների միջև տեղի ունեցած վիճաբանությունը չի կատարվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգով նախատեսված ընթացակարգի շրջանակներում, իսկ մի մասը տեղի է ունեցել ընդմիջման ընթացքում:

Նկատի ունենալով, որ Վարքագծի կանոնագիրքը կիրառելի չէ Ազգային ժողովի պատգամավորների նկատմամբ՝ Հանձնաժողովն օրենքով սահմանված իր լիազորություններով սահմանափակված լինելով՝ չի կարող գնահատել Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի իրավաչափությունը: Այնուամենայնիվ, սույն վարույթի շրջանակներում էական է Հանձնաժողովի կողմից դրան անդրադարձը: Այս համատեքստում Հանձնաժողովն արտահայտում է իր մտահոգությունը Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնների բացակայության, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից երբևէ պատգամավորական էթիկայի կանոնների ենթադրյալ խախտումների կապակցությամբ էթիկայի հանձնաժողով չձևավորելու պրակտիկայի կապակցությամբ: Հանձնաժողովը, որպես բարեվարքության համակարգի միասնականությանը հետևելու մանդատով օժտված պետական մարմին, հատկապես մտահոգիչ է համարում նշված խնդիրն այն տեսանկյունից, որ Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնների բացակայության, միաժամանակ, գործնականում հենց այս պաշտոնատար անձանց կողմից հաճախ դրսևորվող ոչ էթիկական վարքագծի պայմաններում այս դաշտը վերահսկելիությունից դուրս է գալիս: Բացի այդ, պատգամավորական էթիկայի հանձնաժողովի չձևավորումը և պատգամավորների վարքագծի կանոնների բացակայությունը նաև խոչընդոտում է դեպքի համակողմանի քննությանը, քանի որ արդյունքում գնահատականի է արժանանում միայն Վարքագծի կանոնագրքի սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձի (տվյալ դեպքում՝ ՀՀ վարչապետի) վարքագիծը, այն դեպքում, երբ պատգամավորների վարքագիծը պատշաճ իրավական գնահատական չի ստանում:

Քննարկվող դեպքում Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում քննարկել Նիկոլ Փաշինյանի հետևյալ խոսքի համապատասխանությունը Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերին. «(...) որ մի հատ էլ եկել, մամուլի հրապարակումներից ես խոսում: Որտեղի՞ց քեզ Սևանի ափին տուն: Դու ի՞նչ իրավունք ունես Սևանի ափին տուն

ունենաս, մի հատ էլ (կանգնում է) գաս ստեղ (շարունակությունը հստակ չի լսվում, լսվում են նաև պատգամավորների արձագանքներ, որոնք հասկանալի չեն): Արա, մի հատ վեր ընկի տեղդ, արա, է, համբալի մեկը, համբալի մեկը:»:

«Արա» բառը խոսակցական ոճում ունի «արա, այ տղա, է՛յ» իմաստները (Արդի հայերենի բացատրական բառարան, Էդուարդ Բագրատի Աղայան, Երևան, 1976, հատոր 1, էջ 124): «Համբալ» բառն իր իմաստով նույնանում է «համալ» բառի հետ, որը բացատրվում է «շալակավոր բեռ տանող մշակ, բեռնակիր» (Հրաչյա Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Երևան, 1974), «նա, որի արհեստն է շալակով բեռներ փոխադրելը» (Ստեփան Մալխասեանց, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Երևան, 1944): Մի շարք բառարաններում «համալ» բառի բացատրության համար հղում է կատարվում «բեռնակիր» բառին: Վերջինս բացատրվում է որպես «շալակավոր բեռներ փոխադրող բանվոր» (Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան», Երևան, 1976), «բեռ տանող կենդանի կամ մարդ» (Սիմոն Գաբամաճյան, «Նոր բառագիրք հայերեն լեզվի», Երևան, 1910):

«Համբալ» բառն ունի նաև «տարատեսակ (ծանր ու ոչ պատվաբեր) աշխատանքներ կատարող բանվոր», փոխաբերական իմաստով նաև «հիմար, տգետ» իմաստները (Աշոտ Հայրապետյան, «Օտար բառերի բառարան», Երևան, 2011): **Ըստ այդմ, նոր և ժամանակակից բառարաններում «համբալ» բառը, բառիմաստի ընդլայնման արդյունքում ստացել է նաև փոխաբերական իմաստ՝ հանրության կողմից ընկալվելով որպես բացասական և վիրավորական արտահայտություն:**

Ըստ այդմ, Հանձնաժողովն ընդգծում է, որ ՀՀ վարչապետի կողմից կիրառված «համբալ» բառն ունի վիրավորական նշանակություն:

Հանձնաժողովն ընդգծում է, որ նշված միջադեպի շրջանակներում ինչպես ՀՀ վարչապետի, այնպես էլ Ազգային ժողովի պատգամավորների կողմից փոխադարձաբար հնչեցվել են առավելապես վիրավորական բնույթի արտահայտություններ՝ խիստ բարձր տոնայնությամբ: Այնուամենայնիվ, հնարավոր չէ արձանագրել, որ ՀՀ վարչապետը պարզապես արձագանքել է Ազգային ժողովի պատգամավորների խոսքերին համարժեք բառամթերքով:

Հանձնաժողովը կրկին շեշտում է, որ անգամ քաղաքական բանավեճի ընթացքում խիստ անձնական բնույթի վիրավորանքների կիրառումը չի կարող Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի դրույթներին համապատասխան համարվել: Վարքագծի կանոնակարգի 36-րդ և 37-րդ կետերը ենթադրում են, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք իրենց լիազորություններն իրականացնելիս պետք է խուսափեն այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց պատիվը կամ արժանապատվությունը վիրավորող արտահայտությունների կիրառումից: Զսպվածության պարտականությունը ենթադրում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պետք է քաղաքավարի և բարեկիրթ լինեն՝ անկախ դիմացինի վարքագծից:

Չնայած Դիրքորոշմամբ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը հայտնել է, որ իր հնչեցրած արտահայտությունները եղել են բացառապես քաղաքական բանավեճի շրջանակներում և նա որևէ մեկին անձնական վիրավորանք հասցնելու միտում չի ունեցել, այնուամենայնիվ, Հանձնաժողովն ընդգծում է, որ ի տարբերություն վերը նշված այլ արտահայտությունների՝ «համբալ» բառի կիրառումը չի պարունակել որևէ լրացուցիչ իմաստային արժեք՝ բացի վիրավորելուց և չի կապակցվել մինչ այդ հնչեցրած քննադատական բնույթի խոսքին՝ կապված Սևանի առանձնատուն ունենալու հետ մեկտեղ մամուլի հրապարակումների վկայակոչմամբ իշխանության ներկայացուցիչներին քննադատելու հետ:

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից կատարված արտահայտությունն անձնական բնույթի վիրավորանք է, որը, վիրավորելուց զատ լրացուցիչ իմաստային արժեք չունենալով և կապված չլինելով քաղաքական բանավեճի թեմայի և համատեքստի հետ, հատել է իրավաչափության սահմանները և հանգեցրել Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի խախտման:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 33-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ մասերը՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

1. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության մասին:

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**

**ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**